

**ՔԻՒՐՏԵՐՈՒ ԵՒ ՀԱՅԵՐՈՒ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԺՈՒՄՆԵՐՈՒ ՓՈՒԼԵՐԸ ԵՒ ԱՆՈՆՑ ՓՈՒՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

Գրեց՝ Կ. ՍԱՍՈՒՆԻ

ԵՐՐՈՐԳ ԳՂՈՒՊ

1.

ԹՐԲԱԿԱՆ բանակի դաժանութիւնները, ըստ երեւոյթին, անհասկնալի մնացած են Մարեշալ Մուրզիէի համար: Ան իր նամակներուն մէջ կը գրէ.

«Քիւրդերու ներկայացուցիչներուն սիրով կ'ունկնդրենք: Բանակցութիւնները բաւական դժուար են: Քիւրդերը մէկը միւսին կը ժլտտեն: Կը կարծէի, որ բոլոր զիւղերը իրենց ներկայացուցիչները պիտի զրկէին. բայց տակաւին չեկան: Անոնք երբ կը մեղմանան, Հաֆըզ փաշան իր խտուրթիւնը կը սաստկացնէ: Իմ տուած խորհուրդներս այդ ուղղութեամբ ազդեցութիւն չեն ունենար: Քիւրդերը եթէ չենթարկուին, ստիպուած են քաշուիլ Մուշ, ուր կ'իջէ իմին փաշան (քիւրդ), ենթակայ էրզրումի վալիին, որ իր տեղէն չի շարժիր այս զինուորական արշաւանքին ուժ տալու համար»: (Մուրզիէ՝ էջ 249):

Մինչդեռ թրքական իշխանութեան հիմնական նպատակն էր վերջնականօրէն ընկճել քրդական ուժերը, ապագային որեւէ զիմադրական կորովէ զրկելով զանոնք: Թրքական բանակը, փոխանակ Սիւրիոյ սահմաններու վրայ կեդրոնանալու, նախ իր ուժերը փորձեց քրդական գլխաւոր վայրերուն դէմ, իբր թէ զօրամասերը վերակազմելու եւ քիւրդ նոր զինուորացուներով զօրացնելու համար: Սակայն, իսկական նպատակն էր ընկճել քիւրդերը, ու այդ երկրի կողոպուտով սրահել խոշոր բանակ մը: Որով կ'ապահովէին Թուրքիան քրդական վրտանդէն, ու ապա, կը դառնային Իբրահիմ փաշային դէմ:

Այսպէս, թրքական բանակը, անցնելով Խարբերդի եւ Մալաթիոյ շրջանէն դէպի Տիարբէքի, իր գլխաւոր ուշադրութիւնը կեդրոնացուց Տիարբէքի դաշտի (Բըշերիկ-Սիւլման), Խարզանիշ, Մասնոյ եւ Ճէղիրէի շրջաններուն վրայ: Արիւնալի եւ յամառ կռիւնները ընդար-

ձակուեցան մասնաւորաբար Խարզանի շրջանին մէջ:

Մուրզիէն թրքական բանակի անդթութիւններու շարան մը կը թուէ: Հակառակ դերման զօրավարի թելադրանքներուն, թրքական բանակը, անխնայօրէն հրդեհի կը մատնէ քրդաբնակ զիւղերը, սուլիմահար կ'ընէ զիւղերու մէջ մնացած ուսիւն*) քիւրդերը, որոնք խաղաղ ազգաբնակչութիւնը կը կազմէին: Իսկ կռուող աշիւթիները կատաղի զիմադրութիւնցոյց կուտային եւ կը քաշուէին դէպի աւելի ամուր զիբքեր, իրենց կոնական ունենալով Սասնոյ ամբողջ լեռնաշղթան:

Մուրզիէն կը յիշատակէ, որ այդ արշաւանքէն առաջ, Ռէշիտ փաշան (1836) նոյն շրջանի մէջ կռիւններ մղած է, բայց, հակառակ իր բոլոր ճիգերուն, չէ կրցած անցնիլ Հադիս եւ Սասնոյ վրայով Մուշ: Հաֆըզ փաշայի խտուրթիւնները մեծ աւերումներու պատճառ դարձան, բայց թրքական բանակը չկրցաւ վերջնականօրէն ընկճել այդ շրջանը: «Հազարաւոր անմեղ կեանքեր ոչնչացան եւ հազարաւոր զիւղեր աւերուեցան. բայց կռուող քրդերը չընկճուեցան: Մինչեւ որ լաւ վարչութիւն մը չըստեղծուի անոնց համար, այս բոլորը դատապարտուած են անցողական ազդեցութիւն մը միայն ունենալու»: (Մուրզիէ, էջ 215):

Մուրզիէն գովեստով կը խօսի քիւրդերու քաջութեան եւ հպարտ կեցուածքի մասին:

Ի միջի այլոց յիշենք մէկ երկու դրուաղ, որոնք կը բնորոշեն քրդական զիմադրութեան ուժգնութիւնը:

Խարզանի ամուր բերդերէն մէկուն մէջ ապաստանած էր Սայիտ բէյը: Այդ բերդին առջեւ Ռէշիտ փաշան 4000 մարդ կորսնցուցած էր:

*) «Ռայեաները (երեւի հայ եւ քիւրդ ուսիւնները միասին նկատի ունի՝ Կ. Ս.) միայն տուրք կը վճարէին, այն ալ կրկնապատիկ քիւրդերը տուրք չէին տար»: (Մուրզիէ, էջ 209):